

## ԱՆՆԱ ՄԱՆԱՍՅԱՆ

Երևանի «Գլաձոր» համալսարանի ընդհանուր  
իրավագիտության ամբիոնի ասպրիանտ

### ՄԻԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԸ

Սույն հոդվածը նվիրված է Հայաստանի քաղաքացիական իրավունքի գիտության մեջ քիչ ուսումնասիրված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական գործող օրենսգրքով առաջին անգամ նախատեսված միանալու պայմանագրին: Հոդվածում նկարագրվել է տվյալ ինստիտուտի զարգացման պատմությունը ու արժարժվել են դրա կիրառման խնդիրները, ինչպես նաև վերլուծվել է միանալու պայմանագիրը կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 444-րդ հոդվածը, վեր են հանվել և հիմնավորվել դրա ամրագրման թերությունները, արվել են համապատասխան եզրահանգումներ: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում հեղինակի կողմից առաջարկվել է կատարել օրենսդրական բնույթի փոփոխություններ և նորովի խմբագրել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 444-րդ հոդվածը:

*Հիմնարար բառեր* - պայմանագրի ազատության սկզբունք, պայմանագրի ազատության սկզբունքի սահմանափակում, միանալու պայմանագիր, ստանդարտ պայմաններ:

Միանալու պայմանագիրը, ինչպես հրապարակային պայմանագիրը, նույնպես համարվում է պայմանագրի ազատության սահմանափակման հիմք: Այն ունի զարգացման երկար պատմություն: Առաջին անգամ միանալու պայմանագրերը սկսել են կիրառվել 19-րդ դարում՝ իմպերիալիզմի ժամանակաշրջանում, ինչը պայմանավորված է եղել, այսպես կոչված, «բանաձևային իրավունքի» ծագմամբ: Այդ ժամանակաշրջանում ձևավորված մենաշնորհային խոշոր կազմակերպությունները միմյանց միջև կնքվող գործարքների համար սահմանել էին տիպային պայմաններ: Խոսքը մասնավորապես վերաբերում է այնպիսի կազմակերպություններին, որոնք սպասարկում էին բնակչության լայն զանգվածներին (երկաթուղային գծեր, փոստ, հեռագիր և այլն) և չէին կարող յուրաքանչյուր հաճախորդի հետ կնքվող պայմանագրի համար սահմանել անհատական պայմաններ: Միանալու պայմանագրերի կնքումն անհրաժեշտ էր միատեսակ գործարքների դեպքում յուրաքանչյուր անգամ պայմանների ամրագրումից և յուրաքանչյուրի հետ այդ պայմանները համաձայնեցնելուց խուսափելու համար: Այսպես, մենաշնորհ կազմակերպությունը նախապես կազմված բլանկներով իրեն դիմած անձի հետ կնքում էր պայմանագիր, որի պայմանները վերջինիս կողմից ենթակա չէին քննարկման կամ փոփոխման: Հետագայում այդ բլանկները վերածվեցին բանաձևային կամ այլ ստանդարտ ձևերով սահմանված պայմանները նախատեսող պայմանագրերի, որոնց պայմանները նույնպես չէին կարող փոփոխվել կոնտրագենտի կողմից: Բանաձևերի կիրառման պրակտիկան խարսխված էր հասարակ մի սկզբունքի՝ ընդունի՛ր կամ հեռացի՛ր: Անշուշտ դրանցում կային այնպիսի պայմաններ, որոնք սահմանափակում, նույնիսկ բացառում էին կազմակերպությունների պատասխանատվություն-

ը, ուստի շուտով հայտնվեցին առաջին դատական վեճերը այդպիսի պայմաններն առ ոչինչ ճանաչելու պահանջներով: Որպես օրինակ կարելի է նշել 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին, այսպես կոչված, «ճանապարհորդական տոմսերի մասին գործերը» (ticket cases) Մեծ Բրիտանիայում: Սպառող-քաղաքացիները դիմել էին դատարան խնդրելով առ ոչինչ ճանաչել իրենց կողմից գնված երկաթուղային տոմսերը՝ այն պատճառաբանությամբ, որ տոմսի հակառակ կողմի վրա մանր տպատառով, գրեթե անընթեռնելի ձևով սահմանվել են փոխադրման պայմանագրի տիպային այնպիսի պայմաններ, որոնք փոխադրողին ազատում էին պատասխանատվությունից<sup>4</sup>:

Միանալու պայմանագրերի կառուցվածքն առաջին անգամ մշակվել է ֆրանսիական իրավաբանական գրականության մեջ, իսկ միանալու պայմանագրի հասկացությունը 20-րդ դարի սկզբներին առաջին անգամ սահմանվել է ֆրանսիացի իրավագետ Ռ. Սալեի կողմից<sup>5</sup>: Միանալու պայմանագիր ասելով՝ նա հասկանում էր այնպիսի պայմանագիր, որով մենաշնորհային դիրք ունեցող մոնոպոլիստը կոնտրագենտին էր ներկայացնում իր պայմանները: Վերջինս կարող էր կամ միանալ պայմանագրին և համաձայնվել պայմաններին, կամ չընդունել այն. նա պայմանագրի պայմանները փոփոխելու կամ քննարկելու իրավունք չուներ:

Պետք է նշել, որ կոնտրագենտին տրված պայմանագիրը կնքելուց հրաժարվելու իրավունքը ձևական-իրավական բնույթ է կրում: Որպես կանոն կոնտրագենտը, տնտեսական պայմաններից և օբյեկտիվ պատճառներից ելնելով, չի կարող հրաժարվել ներկայացվող պայմանագրից<sup>6</sup>: Այսինքն՝ միանալու պայմանագրով ակնհայտորեն սահմանափակվում է պայմանագրի ազատության սկզբունքը:

www.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Թեպետ, մյուս կողմից դիտարկելով, միանալու պայմանագիրն ի վերջո պայմանագրի տեսակ է, այսինքն՝ նույնպես բնութագրվում է կողմերի ազատ կամահայտնությամբ, կողմերի իրավահավասարությամբ և այլ հատկանիշներով: Եթե կողմը հնարավորություն ունի միանալու պայմանագրի կնքումից հրաժարվել, նշանակում է պայմանագրին միանալը նրա ազատ կամքի դրսևորումն է: Այսպես, որոշ հեղինակներ գտնում են, որ միանալու պայմանագիր կնքելիս չի խախտվում պայմանագրի ազատության սկզբունքը, քանի որ միացող կողմն ունի պայմանագիր կնքելու կամ չկնքելու ընտրության հնարավորություն<sup>7</sup>: Նշվածից հետևում է, որ միանալու պայմանագրի դեպքում միացող կողմն ունի կոնտրագենտին ընտրելու իրավունք, և նա իրավասու է ազատ կամահայտնությամբ ընտրելու միանալու պայմանագիր կնքելու առաջարկություն անող այս կամ այն կողմին:

Մինչդեռ, սույն կարծիքին հետևող հեղինակներն անտեսել են այն հանգամանքը, որ միացող կողմն իրավունք չունի սահմանելու և ազատորեն ընտրելու միանալու պայմանագրի պայմանները: Նման պարագայում սահմանափակվում է միացող կողմի՝ պայմանագրի պայմաններն ազատորեն որոշելու իրավունքը:

Երբ պայմանագիրը չի համարվում կողմերի ազատ կամահայտնության արդյունք, այլ փոխարինվում է նախապես ձևավորված ստանդարտներով, ապա այն մշակող կողմը ունենում է հնարավորություն իր կոնտրագենտին «փաթաթելու» միայն իրեն հարմար պայմաններ և, հետևաբար, նրա վրա դնել բոլոր պայմանագրային ռիսկերը: Վերջինս էլ ոչ միայն չի կարող քննարկել այդ բանաձևերի բովանդակությունը, այլև երբեմն չունի ընտրության հնարավորություն՝ միանալու, թե՛ ոչ այդպիսի պայմանագրին: Այս երևույթի նկարագրման համար գրականության մեջ կա հատուկ արտահայտություն՝ «inequality of bargaining power» («բանակցային հնարավորությունների անհավասարություն»): Հաշվի առնելով այն փաստը, որ որպես կոնտրագենտ հանդես է գալիս մի կողմում մենաշնորհ ունեցող կազմակերպությունը, մյուս կողմում՝ անհատը՝ իրավաբանական գրականության մեջ շատ հաճախ միանալու պայմանագիրը դիտարկվում է որպես մենաշնորհային դիրք ունեցող կազմակերպությունների իշխանության արտահայտման արդյունք: Հենց այս տեսանկյունից գրեթե միաժամանակ միանալու պայմանագրի ուսումնասիրությունն են կատարել հեղինակներ Լ.Ա.Լունցը<sup>8</sup> և Ե.Ա.Ֆլեիշիցը<sup>9</sup>:

Այդպիսի պայմանագրերում պայմանական համաձայնություն, իհարկե, առկա է, սակայն ակնհայտ է (և համամիտ ենք Ե.Գոդեմեի հետ), որ միանալու պայմանագրում չկա համաձայնություն,

այլ կա միայն երկու կամահայտնությունների համադրություն<sup>10</sup>: Սակայն պայմանագրի անսահման ազատությունը կրերի կողմերի իրավունքների հավասարակշռության խախտում այն առումով, որ ավելի ուժեղ կողմը, օգտվելով պայմանագրի ազատության սկզբունքից, ոչ միայն ընտրում է կոնտրագենտին, այլև միայն իրեն հարմար պայմաններ է սահմանում: Եթե կոնտրագենտը ցանկանա փոփոխել պայմանագրի պայմանները, ապա մյուս կողմն իրավասու է հրաժարվել պայմանագրի կնքումից. «... եթե ցանկանում ես ունենալ այս ապրանքները կամ ծառայությունները, ապա պարտավոր ես ընդունել միայն այն պայմանները, որոնց հիման վրա կարելի է դրանք ձեռք բերել: Համաձայնիր այս պայմանների հետ կամ էլ հրաժարվիր պայմանագրից»<sup>11</sup>:

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածը երաշխավորում է տնտեսական գործունեության ազատությունը՝ որպես սահմանադրական կարգի հիմունքներից մեկը: Կոնկրետացնելով այս դրույթը ՀՀ Սահմանադրության 33.1-րդ հոդվածում՝ օրենսդիրը հռչակում է, որ յուրաքանչյուրն իրավունք ունի ազատորեն օգտագործելու իր հնարավորությունները ձեռնարկատիրական և օրենքով չարգելված այլ գործունեություն իրականացնելու համար:

Սահմանադրական այս նորմերի իմաստից բխում է պայմանագրի ազատության՝ որպես պետության կողմից երաշխավորված մարդու և քաղաքացու ազատության սահմանադրական ճանաչումը, որը ՀՀ քաղ. օր.-ում հռչակվում է որպես քաղաքացիական օրենսդրության սկզբունքներից մեկը: Դրա հետ մեկտեղ պայմանագրի սահմանադրական ազատությունը բացարձակ չէ և կարող է սահմանափակվել օրենքով և միայն այն չափով, որ չափով դա անհրաժեշտ է սահմանադրական կարգի հիմքերի, այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով: Ուստի, հռչակելով պայմանագրի ազատության սկզբունքը, օրենսդիրը, միաժամանակ, հասարակության բոլոր անդամների շահերից ելնելով, ոչ միայն ճանաչում է միանալու միջոցով պայմանագրի կնքման հնարավորությունը, այլև ՀՀ քաղ. օր.-ում ընդգրկել է նորմեր, որոնք արգելում են ակնհայտ ծանր և խտրական պայմանների նախատեսումը միանալու պայմանագրում: Այսինքն՝ ՀՀ քաղ. օր.-ի 444-րդ հոդվածում ամրագրված միանալու պայմանագրի նորմերը դրսևորվում են երկու ասպեկտով: Մի կողմից ՀՀ քաղ. օր.-ի 444-րդ հոդվածի 1-ին կետի դրույթը հնարավորություն է տալիս ամբողջությամբ իրականացնել պայմանագրի ազատության սկզբունքը, մասնավորապես՝ նախապես մշակել պայմանագրի պայմանները, դասակարգել բանաձևերում և առաջարկել կոնտ-

րագենտին՝ կնքելու պայմանագիրը ամբողջությամբ միանալու եղանակով: Մյուս կողմից դա ենթադրում է պայմանագրի միացող կողմի պայմանագրային ազատության էական սահմանափակում այն առումով, որ վերջինս գրկված է մասնակցելուց կնքվող պայմանագրի պայմանների ձևավորման փուլին:

Մեր կարծիքով, ՀՀ քաղ. օր.-ի 444-րդ հոդվածի 1-ին կետի դրույթը սահմանված է ոչ այնքան հաջողված: Այսպես, համաձայն ՀՀ քաղ. օր.-ի 444-րդ հոդվածի 1-ին կետի՝ պայմանները, որոնք սահմանված են բանաձևային կամ այլ ստանդարտ ձևերով, կարող են ընդունվել մյուսի կողմից ոչ այլ կերպ, քան «առաջարկվող պայմանագրին ամբողջությամբ միանալով»: Ելնելով այս նորմի տառացի մեկնաբանությունից՝ կարելի է եզրահանգել, որ պայմանագրի բոլոր պայմանները որոշում, սահմանում է պայմանագրի միայն մի կողմը, իսկ մյուս կողմն էլ պարտավոր է այդպիսի պայմանագիրն ընդունել ամբողջությամբ: Եթե նույնիսկ մի պայմանը համաձայնեցված է կողմերի միջև, օրինակ՝ ապրանքի քանակի կամ գնի վերաբերյալ պայմանը, ապա այդպիսի պայմանագիրն արդեն չի կարող համարվել միանալու պայմանագիր, հետևաբար բացառվում է ՀՀ քաղ. օր.-ի 444-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի կիրառումը: Այսինքն՝ միանալու պայմանագիրը կարող է համարվել կնքված, եթե կողմը միանում է արդեն իսկ սահմանված *պայմաններին ամբողջապես*:

Ուստի, մեր կարծիքով, ավելի ճիշտ կլիներ, եթե ՀՀ քաղ. օր.-ի 444-րդ հոդվածի 1-ին կետը սահմանվեր հետևյալ կերպ. «Միանալու է համարվում այն պայմանագիրը, որի պայմանները կողմերից մեկը սահմանել է բանաձևային կամ այլ ստանդարտ ձևերով, իսկ մյուս կողմը դրանք կարող է ընդունել առաջարկվող պայմաններին ամբողջությամբ միանալով»:

Նման սահմանումից կարելի է առանձնացնել միանալու պայմանագրի հետևյալ հատկանիշները.

- Առաջին՝ պայմանագրի պայմանները սահմանվում են պայմանագրի կողմերից մեկի կողմից բանաձևային կամ այլ ստանդարտ ձևերով: Տվյալ պայմանները պետք է կրեն ընդհանուր բնույթ, նախատեսված լինեն բազմակի կիրառման համար միատիպ գործարքների կնքման ժամանակ:

- Երկրորդ՝ այդպիսի պայմանների ակցեպտը պետք է լինի լրիվ և անվերապահ, ենթադրող, որ դրան կմիանան ամբողջությամբ /in toto/:

Միանալու պայմանագրի իրավական բնույթը որոշ առումներով կանխորոշվում է նաև սուբյեկտային կազմով: ՀՀ քաղ. օր.-ի 444-րդ հոդվածից պարզ է, թե ով կարող է լինել պայմանագրի

պայմանները սահմանող և դրանք միացող կողմին առաջարկող կողմը, այսինքն՝ տվյալ նորմը դիսպոզիտիվ է և ուղղված է քաղաքացիական շրջանառության բոլոր մասնակիցներին: Հետևաբար, գույքային շրջանառության մասնակից համարվող յուրաքանչյուր անձ իրավունք ունի մշակելու պայմանագրի բանաձևային կամ այլ ստանդարտ ձևերով պայմանները և առաջարկի իր կոնտրագենտին: Այդպիսիք կարող են լինել ոչ միայն առևտրային կազմակերպությունները, այլև անհատ քաղաքացի-ձեռնարկատերերը, որոնք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների շուկայում ունեն գերիշխող դիրք:

Միաժամանակ, չենք կարող համաձայնել այն հեղինակների հետ, ովքեր միանալու պայմանագիրը դիտարկում են որպես մենաշնորհի կազմակերպությունների կողմից իրենց իրավունքների չարաշահման՝ օրենսդրությամբ ամրապնդված հնարավորություն և միանալու պայմանագրին տալիս են որոշակի բացասական նշանակություն<sup>12</sup>: Կարծում ենք, որ միայն բանաձևային կամ այլ ստանդարտ ձևերով միացող կողմի համար պայմանագրի ակնհայտ ծանր պայմանների ներառման դեպքում կարելի է հաստատել պայմանագրի ազատության և կողմերի իրավահավասարության սկզբունքների խախտման մասին: Ընդհանուր առմամբ, քաղաքացիական շրջանառության մասնակիցների կողմից միանալու պայմանագրի կիրառումը կարելի է դիտարկել որպես դրական երևույթ՝ ուղղված պայմանագրի կնքման ավելի արագ և հեշտացված կարգին:

Թե՛ հայրենական, թե՛ ռուսական իրավաբանական գրականության մեջ գրեթե չի խոսվել այն մասին, թե արդյոք պետությունը և վարչական մարմինները (համայնքները) կարող են լինել միանալու պայմանագրի սուբյեկտ: Այս հարցի լուծումն էական նշանակություն ունի պետության կամ համայնքների մասնակցությամբ պարտավորությունների դասակարգման համար:

Համաձայն ՀՀ քաղ. օր.-ի 1-ին հոդվածի 2-րդ կետի՝ քաղաքացիների ու իրավաբանական անձանց հետ մեկտեղ ՀՀ-ն և համայնքները նույնպես համարվում են քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցներ: Չնայած որ պետությունը և համայնքները իրենց հանրային-իրավական բնույթով, համարվում են հատուկ սուբյեկտներ, քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ նրանք մտնում են այլ մասնակիցների հետ հավասար հիմունքներով: Ենթադրվում է, որ այս առումով պետությունն ու համայնքները կարող են միանալու պայմանագրով հանդես գալ որպես պայմանագրի պայմանները բանաձևային կամ այլ ստանդարտ ձևով սահմանող և այն մյուս կողմին առաջարկող կողմ: Օրինակ, համայնքների

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մասնակցությամբ միանալու պայմանագիր է համարվում ՀՀ քաղ. օր.-ի 1040-րդ հոդվածով նախատեսված՝ ՀՀ համայնքների մասնակցությամբ վիճակախաղերի, տոտալիզատորների և ռիսկի վրա հիմնված այլ խաղերի հարաբերությունները կարգավորելու համար կնքված պայմանագիրը:

Դրա հետ մեկտեղ պետք է հաշվի առնել, որ պետության կամ համայնքների կողմից առաջարկվող բանաձևային կամ այլ ստանդարտ ձևով սահմանված պայմանները չպետք է կրեն նորմատիվային բնույթ:

Կարևոր է նաև միանալու պայմանագրին միացող կողմի որոշման հարցի պարզաբանումը, քանի որ որպես առավել թույլ կողմի՝ օրենսդիրը հենց նրան է հնարավորություն ընձեռել ՀՀ քաղ. օր.-ի 444-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հատուկ պայմանների առկայության դեպքում պահանջել փոփոխել կամ դադարեցնել պայմանագիրը:

Համաձայն ՀՀ քաղ. օր.-ի 444-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի՝ պայմանագրին միացած կողմն իրավունք ունի պահանջել լուծելու կամ փոփոխելու պայմանագիրը, եթե միանալու պայմանագիրը, թեկուզև չի հակասում օրենքին և այլ իրավական ակտերին, սակայն այդ կողմին գրկում է նման տեսակի պայմանագրերով սովորաբար տրամադրվող իրավունքներից, բացառում կամ սահմանափակում է մյուս կողմի պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար կամ պարունակում է միացած կողմի համար այլ ակնհայտ ծանր պայմաններ, որոնք նա, ելնելով ողջամտորեն գիտակցված իր շահերից, չէր ընդունի, եթե հնարավորություն ունենար մասնակցել պայմանագրի պայմանների ընտրությանը:

Նշված նորմերից բխում է, որ միանալու պայմանագրում որպես միացող կողմ կարող են հանդես գալ ինչպես սպառողները, այնպես էլ քաղաքացիական շրջանառության այն մասնակիցները, ովքեր պայմանագիր են կնքել իրենց ձեռնարկատիրական գործունեության հետ կապված: Սակայն, կախված նրանից, թե ինչպիսի գործունեությամբ է միացող կողմը կնքում պայմանագիր, ՀՀ քաղ. օր.-ի 444-րդ հոդվածը սահմանում է տարբեր կանոններ, եթե նշված անձը պահանջում է փոփոխել կամ դադարեցնել պայմանագիրը դրանում ակնհայտ ծանր պայմաններ սահմանվելու դեպքում:

ՀՀ քաղ. օր.-ի 444-րդ հոդվածում նշված «սպառող» հասկացությունը պետք է ավելի լայն մեկնաբանել, քան «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում է նշված: Միանալու պայմանագրում որպես սպառող պետք է հասկանալ նախ քաղաքացի-սպառողներին, որոնք ցանկանում են պատվիրել կամ ձեռք բերել

ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ բացառապես անձնական, ընտանեկան, տնային և այլ կարիքների համար, որոնք կապված չեն նրա ձեռնարկատիրական գործունեության հետ: Երկրորդ՝ անհատ ձեռնարկատերերին այն դեպքերում, երբ նրանք կնքում են միանալու պայմանագիր ոչ թե ձեռնարկատիրական գործունեության հետ կապված, այլև անձնական, տնային և այլ պահանջմունքների բավարարման համար: Ուստի, համամիտ չենք այն հեղինակների հետ, ովքեր կարծում են, որ նշված կանոնները տարածվում են միայն «ձեռնարկատեր համարվող սպառողի վրա»<sup>13</sup>: Դա հակասում է քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների հավասարության սկզբունքին: Երրորդ՝ որպես սպառող կարող են հանդես գալ իրավաբանական անձինք, որոնք չեն համարվում առևտրային կազմակերպություններ այն դեպքերում, երբ վերջիններս կնքում են միանալու պայմանագիր՝ կանոնադրությամբ նախատեսված գործունեության նպատակներից ելնելով: Չորրորդ՝ առևտրային կազմակերպությունները, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող քաղաքացի-սպառողները, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունները, որոնք նման գործունեություն են ծավալում՝ համաձայն կանոնադրության:

Արտասահմանյան քաղաքացիական իրավունքում միանալու պայմանագրի սուբյեկտային կազմի վերաբերյալ խնդիրը լուծվել է գրեթե համանման ձևով:

Այսպես, համաձայն 1976թ.-ի Գերմանիայի «Գործարքների ընդհանուր պայմանների մասին» օրենքի 24 և 24a պարագրաֆների՝ գործարքների ընդհանուր պայմանների հիման վրա պայմանագրերը կարող են կնքվել ինչպես առևտրականների, այնպես էլ ձեռնարկատերերի և սպառողների միջև, որոնք, ըստ այդ օրենքի, ֆիզիկական անձինք են, ովքեր պայմանագիր են կնքում՝ կապված չլինելով իրենց առևտրային կամ էլ այլ պրոֆեսիոնալ գործունեության հետ: Իսկ Մեծ Բրիտանիայի օրենսդրությունը չի սահմանում միանալու պայմանագրի հասկացությունը, ուստի և չի պարզաբանում դրա սուբյեկտային կազմը: Սակայն 1977թ.-ից Մեծ Բրիտանիայում գործում է «Պայմանագրերի անբարեխիղճ պայմանների մասին» օրենքը<sup>14</sup>, որի դրույթները տարածվում են ինչպես ձեռնարկատերերի միջև, այնպես էլ սպառողների մասնակցությամբ կնքված ստանդարտ ձևով պայմանագրերի նկատմամբ:

Վերլուծելով ՀՀ քաղ. օր.-ի 444-րդ հոդվածի 2-րդ կետը՝ կարող ենք նշել, որ միացող կողմը հնարավորություն է ստանում իր իրավունքների պաշտպանության համար ներկայացնել պահանջներ հետևյալ հանգամանքների առկայության

դեպքում.

• Եթե միանալու պայմանագիրը թեկուզև չի հակասում օրենքին և այլ իրավական ակտերին, սակայն գրկում է նրան նման տեսակի պայմանագրերով սովորաբար տրամադրվող իրավունքներից:

• Եթե միանալու պայմանագիրը բացառում կամ սահմանափակում է մյուս կողմի պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար:

• Եթե միանալու պայմանագիրը պարունակում է միացած կողմի համար այլ ակնհայտ ծանր պայմաններ, որոնք նա, ելնելով ողջամտորեն գիտակցված իր շահերից, չէր ընդունի, եթե հնարավորություն ունենար մասնակցել պայմանագրի պայմանների որոշմանը:

Տվյալ պարագայում որոշակի բարդություններ են ծագում՝ կապված «միացող կողմի համար ակնհայտ ծանր պայմաններ» հասկացության հաստատման հետ: Օրենսդիրը չի սահմանել, թե որոնք են ակնհայտ ծանր պայմանները: Այս հարցը լուսաբանվել է միայն տեսական գրականության մեջ: Այսպես, օրինակ, ըստ Ա.Գ.Կորեցկիի՝ անբարեխիղճ, ակնհայտ ծանր կարելի է համարել ցանկացած պայման, որն օբյեկտիվորեն հակասում է պայմանագրի կողմերի իրավունքներին և կոնտրագենտի կատարած լրացուցիչ ծախսերի փոխհատուցում չի նախատեսում<sup>15</sup>: Գտնում ենք, որ ակնհայտ ծանր պայմաններ ասելով՝ նախևառաջ, պետք է նկատի է ունենալ այնպիսի պայմաններ, որոնք նախատեսում են պայմանագրի փոփոխում կամ լուծում միայն պայմանագրի պայմանները սահմանող կողմի համար, երկրորդ՝ պայմանագրային պարտավորությունների չկատարման համար միայն միացած կողմի նկատմամբ պատասխանատվություն սահմանող պայմաններ, ինչպես նաև դրանք այնպիսի պայմաններ են, որոնց ծանրությունը ակնհայտ է յուրաքանչյուրի համար և այլն:

Օֆերենտի կողմից պայմանագրում ակնհայտ ծանր պայմանների ընդգրկումը առավել սրանում է, երբ որպես միացող կողմ հանդես է գալիս սպառողը: Իսկապես, ունենալով տնտեսական առավելություն և գիտակցելով, որ սպառողը չունի իրական հնարավորություններ՝ քննարկելու կնքվող պայմանագրի պայմանները, ձեռնարկատերը հաճախ փորձում է շեղվել օրենքով սահմանված պարտականություններից և կարող է պայմանագրային պարտավորությունների կատարման համար սահմանափակել կամ էլ ամբողջովին բացառել իր պատասխանատվությունը կոնտրագենտի առջև, իսկ կոնտրագենտի վրա դնել լրացուցիչ, օրենքով չնախատեսված պարտականություններ: Ինչպես իրավագիտորեն նկատել է Գ. Տրեխտելը.

«Բանաձևերի կիրառման նպատակը մի դեպքում ապրանքներ վաճառող և ծառայություններ մատուցող մատակարարների, մյուս դեպքում սպառողների միջև տնտեսական գերազանցության իրականացումն է»<sup>16</sup>:

Նշենք նաև, որ վերոգրյալ 3 կետերով նախատեսված հանգամանքների առկայությամբ պայմանագրի միացած կողմի՝ պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու վերաբերյալ պահանջը, որը կապված չէ նրա ձեռնարկատիրական գործունեության հետ, ենթակա է բավարարման: Այս դեպքում կարևոր չէ, թե տվյալ քաղաքացին գիտեր կամ պետք է իմանար կնքվող պայմանագրի պայմանների մասին: Իսկ այն դեպքում, երբ նախատեսված հանգամանքների առկայությամբ պայմանագրի միացած կողմի՝ պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու վերաբերյալ պահանջը, որը կապված է նրա ձեռնարկատիրական գործունեության հետ, ենթակա չէ բավարարման, եթե միացած կողմը գիտեր կամ պետք է իմանար կնքվող պայմանագրի պայմանների մասին (ՀՀ քաղ. օր.-ի 444-րդ հոդվածի 3-րդ կետ):

Կարծում ենք, որ ՀՀ քաղ. օր.-ի 444-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հիմքերով միացած կողմի՝ պայմանագրի պայմանները դատական կարգով վիճարկելու հնարավորությունը բավական չէ: Խախտված իրավունքների դատական պաշտպանության իրավունքով օժտված են քաղաքացիական շրջանառության բոլոր մասնակիցները և կարող են իրականացնել թե՛ մինչ պայմանագրի կնքումը, թե՛ պայմանագրի կնքումից հետո առաջացած վեճը լուծելիս: Այնինչ, միանալու պայմանագրի դեպքում խախտված իրավունքների դատական պաշտպանությունը հնարավոր է միայն պայմանագրի կնքումից հետո:

ՀՀ քաղ. օր.-ի 444-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթների՝ գործնական կյանքում կիրառման համար կարևոր է ապացուցման բեռի բաշխման հարցի լուծումը: Այսպես, Մ.Ի.Բրազդինսկիի կարծիքով՝ քննարկվող հոդվածի հետևանքները վրա հասնելու համար (պայմանագրի փոփոխում կամ դադարեցում) կողմը պարտավոր է ապացուցել..., որ ինքը չգիտեր կամ չէր կարող իմանալ, թե ինչ պայմաններով է կնքում պայմանագիրը<sup>17</sup>: Հետևաբար, միացող կողմի վրա է ընկած ապացուցման բեռը, որ նրան հայտնի չի եղել և չէր էլ կարող հայտնի լինել, որ պայմանագրի բանաձևային կամ այլ ստանդարտ ձևերում պարունակում են իր համար ակնհայտ ծանր պայմաններ:

Սակայն, անհրաժեշտ է համաձայնել այն հեղինակների հետ, ովքեր համարում են, որ ապացուցման բեռը պետք է կրի այն կողմը, ով առաջարկել է միացող կողմին միանալ իր պայմաններին և հղում է կատարում, որ վերջինս գիտեր կամ



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պարտավոր էր իմանալ, թե ինչ պայմաններով է կնքում պայմանագիրը<sup>18</sup> : Կարծում ենք, որ այս մտեցումը ավելի է համապատասխանում ՀՀ քաղ. օր.-ի 444-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթի բովանդակությանը:

Բացի այդ, ապացուցման բեռի այսպիսի բաշխումը արդարացված է նաև այնքանով, որ միացող կողմը պայմանագրի առավել թույլ կողմն է: Հետևաբար, ապացուցման բեռի փոխանցելը ուժեղ կոնտրագենտին ապահովում է միացող կողմի իրավունքների ու օրինական շահերի անհրաժեշտ պաշտպանության ամբողջ ծավալը:

Հաշվի առնելով վերը նշված հակադիր կարծիքները, ինչպես նաև ՀՀ քաղ. օր.-ի 444-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթների մեկնաբանությունը՝ կարծում ենք, որ օրենսդրորեն անհրաժեշտ է ամրագրել հանգամանքների ապացուցման բաշխման բեռի կանոնը հետևյալ խմբագրությամբ. «Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված հանգամանքների առկայության դեպքում պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու մասին պայմանագրին միացած կողմի ներկայացրած պահանջը, կապված նրա ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ, ենթակա չէ բավարարման, եթե մյուս կողմը ապացուցում է, որ միացող կողմը գիտեր կամ պարտավոր էր իմանալ, թե ինչ պայմաններով է կնքում պայմանագիրը»:

Բացի վերոգրյալ հանգամանքներից՝ միացող կողմի կոնտրագենտը պարտավոր է ապացուցել նաև, որ պայմանագիրը կնքվել է միացող կողմի ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում:

Նույնանման կանոնը իր արտահայտումն է գտել բազմաթիվ երկրների օրենսդրության մեջ և դատական պրակտիկայում, համաձայն որի՝ այն հանգամանքի ապացուցումը, որ կոնտրագենտն ունեցել է հնարավորություն ծանոթանալու միանալու պայմանագրի պայմաններին, պետք է կատարի այն կողմը, ով հիմնվում է այդ պայմանների վավերությանը :

Ներկայումս չենք կարող հաստատորեն նշել, որ Հայաստանում արդեն իսկ ձևավորվել է ակնհայտ ծանր պայմաններից միացող կողմի իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմ: Բնարկե, միացող կողմն իրավունք ունի համապատասխան հայցով դատարան դիմել, սակայն դատարանի կայացրած վճիռները կապված են միայն կոնտրագենտների միջև ծագած անհատական քաղաքացիաիրավական հարաբերություններին: Դատարանի կողմից միանալու պայմանագրի պայմաններն ակնհայտ ծանր ճանաչելը և քաղաքացիական շրջանառության տվյալ մասնակիցների նկատմամբ քաղաքացիաիրավական սանկցիաներ կիրառելը չի խոչընդոտում այդ

բանաձևերի կիրառումը պայմանագրի մյուս կոնտրագենտների հետ հարաբերություններում: Ակնհայտ է, որ պահանջվում են լրացուցիչ մեթոդներ և միջոցներ անբարեխիղճ կոնտրագենտի վրա ազդեցություն գործելու համար:

Միացող կողմի իրավունքների պաշտպանության նմանատիպ մեխանիզմը կարող է իրագործվել միայն օրենսդրությամբ ուղղակիորեն ամրագրելով, որ պայմանագրի բանաձևային կամ այլ ստանդարտ ձևերով սահմանված պայմաններն առաջարկող կողմը պարտավոր է մինչև պայմանագրի կնքումը դրանց օգտագործման համար թույլտվություն ստանալ իրավասու պետական մարմնի կողմից:

Միանալու պայմանագրի անվանման ներքո միավորում են բոլոր այն պայմանագրերը, որոնք կնքվել են պայմանագրի մի կողմի պայմանագրի պայմաններին ամբողջությամբ միանալու միջոցով, որոնք մյուս կողմը սահմանել է բանաձևային կամ այլ ստանդարտ ձևերով: Այսինքն՝ ի տարբերություն քաղաքացիաիրավական մյուս պայմանագրերի, միանալու պայմանագիրը բնութագրում է ոչ թե դրանից ծագող պարտավորության էությունը կամ պայմանագրի մի կողմի ծավալած գործունեությունը /օրինակ, հրապարակային պայմանագիր/, այլ պայմանագրի կնքման միջոցը: Պետք է նշել, որ միանալու պայմանագիր կնքվում է այն դեպքում, երբ պայմանագիրը հնարավոր չէ կնքել սովորական եղանակով<sup>20</sup>: ՀՀ քաղ. օր.-ի երկրորդ մասում այս կամ այն պայմանագիրը միանալու պայմանագիր համարվելու մասին հստակ մատնանշում չլինելու պատճառով յուրաքանչյուր վիճելի դեպքում պետք է նախ պարզել, թե տվյալ պայմանագիրը կարող է կնքվել սովորական եղանակով, եթե ոչ, ուրեմն այն պետք է կնքվի պայմանագրին միանալու միջոցով: Այսպես, միանալու պայմանագիր կարող է լինել բեռնափոխադրման, էներգամատակարարման, մանրածախ առուվաճառքի, բանկային ավանդի, հյուրանոցային սպասարկման և այլ պայմանագրերը: Օրինակ, որևէ հյուրանոցի կառավարիչ չի կարող ամեն անգամ հյուրանոցային սպասարկման անհատական պայմաններ մշակել հյուրանոցին դիմած յուրաքանչյուր քաղաքացու հետ:

Միանալու պայմանագրի վերոշարադրյալ խնդիրները վեր հանելուց և քննարկելուց հետո կարելի է կատարել մի շարք հետևություններ.

Առաջին՝ միանալու պայմանագիրը սահմանափակում է պայմանագրի ազատության սկզբունքը, մասնավորապես՝ պայմանագրի պայմաններն ազատորեն որոշելու իրավունքը: Սակայն բոլոր դեպքերում պայմանագրի սպառող կողմը տնտեսապես ավելի թույլ է, քան միանալու պայմանագրերի պայմանները սահմանող կողմը, ուստի կողմն-

www.lawinstitute.am

րի նման անհավասարությունը պահանջում է պայմանագրի թույլ կողմի պաշտպանության համար սահմանել լրացուցիչ երաշխիքներ:

Երկրորդ՝ միանալու պայմանագիրը ավելի շուտ ոչ թե պայմանագրի առանձին տեսակ է, այլ պայմանագրի կնքման միջոց:

Երրորդ՝ կարծում ենք՝ ՀՀ քաղ. օր.-ի 444-րդ հոդվածն ունի վերախմբագրման անհրաժեշտություն, ուստի առաջարկում ենք այն լրամշակել, խմբագրել հետևյալ կերպ.

«1. Միանալու է համարվում այն պայմանագիրը, որի պայմանները կողմերից մեկը սահմանել է բանաձևային կամ այլ ստանդարտ ձևերով, իսկ մյուս կողմը դրանք կարող է ընդունել առաջարկվող պայմաններին ամբողջությամբ միանալով»:

<sup>1</sup> Տե՛ս Халфина Р.О. Реакционная сущность гражданского права современных капиталистических государств. М., 1968, С. 15.

<sup>2</sup> Տե՛ս Гражданское и торговое право зарубежных государств. В 2-х т., Т. 1. Отв.ред. Васильев Е.А. и Комаров А.С. М., 2004, С. 523.

<sup>3</sup> Տե՛ս Richardson, Spence & Co. v. Rowntree [1984] AC 217, Parker v. South Eastern Railway Co. /1877/, 2 C.P.D. 416, Thompson v. London, Midland & Scottish Railway Co. [1930] 1 K.B. 41.

<sup>4</sup> Տե՛ս Гражданское и торговое право зарубежных государств. В 2-х т., Т. 1. Отв.ред. Васильев Е.А. и Комаров А.С. М., 2004, С. 529.

<sup>5</sup> Տե՛ս Contrat d'adhesion, diktierter Vertrag: Սակայն որոշ հեղինակներ մատնանշում են «միանալու պայմանագիր» եզրույթի անհստակությունը, քանի որ չի կարող գոյություն ունենալ «ինչ-որ բանի» պայմանագիր: Այսպես, ռուսական և արտասահմանյան գրականության մեջ որոշ հեղինակների կողմից օգտագործվում է «պայմանագիր միանալու միջոցով»: Տե՛ս Май С.К. Очерк общей части буржуазного обязательственного права. М., 1953, С. 40, Անգլո-ամերիկյան իրավունքում կիրառվում է «ստանդարտ ձևով պայմանագիր» հասկացությունը /Standart Form Contracts/:

<sup>6</sup> Միանալու պայմանագրերի մասին տե՛ս Флейшиц Е.А. Буржуазное гражданское право на службе монополистического капитала, М., 1948, С. 52, Лунц Л.А. Основной экономический закон современного капитализма и реакционная сущность буржуазного гражданского права. //“Советское государство и право”, 1953, N 2-3, С. 115-117.

<sup>7</sup> Տե՛ս Комментарий к Гражданскому кодексу РФ части первой (постатейный). Отв.ред. Садиков О.Н., М., 2007, С. 963.

<sup>8</sup> Տե՛ս Лунц Л.А. Денежное обязательство в гражданском и коллизионном праве капиталистических стран. М., 1948, С. 96.

<sup>9</sup> Տե՛ս Флейшиц Е.А. Буржуазное гражданское право на службе монополистического капитала, М., 1948, С. 38.

<sup>10</sup> Տե՛ս Годэмэ Э. Общая теория обязательств // Уч. Труды ВИЮН.-Вып. XIII.-1984, С. 54.

<sup>11</sup> Տե՛ս լորդ Դիփլոկ /Lord Diplock/ ձևակերպումը Schroder Music Publishing Co Ltd v. Macaulay [1974] 3 All ER 616 at 624, [1974] 1 WLR 1308 at 1316 գործում:

<sup>12</sup> Տե՛ս Флейшиц Е.А. Вступительная статья к кн. Л. Жюлио де ла Морандьер. Гражданское право Франции, Т.2. М., 1960, С. 16, Халфина Р.О. Реакционная сущность гражданского права современных капиталистических государств. М., 1968, С. 51, Гражданское и торговое право капиталистических стран /Агарков М.М., Брагусь С.Н., Генкин Д.М., Лунц Л.А. и др., Под. ред. Генкина Д.М., М., 1949, С 232.

<sup>13</sup> Տե՛ս Комментарий к ГК РФ. Часть первая /Постатейный/ //Отв. ред. Садиков О.Н., М., 1995, С. 415.

<sup>14</sup> Տե՛ս Unfair Contract Terms Act 1977, Chapter 50՝ /էլեկտրոնային աղբյուր/՝http://legislation.gov.uk/ukga/1977/50

<sup>15</sup> Տե՛ս Корецкий А.Д. Теоретико-правовые основы учения о договоре /Отв.ред. Баранов П.П., Ростов-на-Дону, 2001, С. 61.

<sup>16</sup> Treitel G.H., The law of contract. 9 Ed. London: Sweet & Maxwell, 1995, С. 136.

<sup>17</sup> Տե՛ս Брагинский М.И., Витрянский В.В., Договорное право. Книга первая: Общие положения: Изд. 3-е. М.:Статут, 2002, С. 262.

<sup>18</sup> Տե՛ս Гражданский кодекс РФ. Часть первая. Научно-практический комментарий /отв. ред. Абова Т.Е., Кабалкин А.Ю., Мозолин В.П. М., 1996, С. 628, Витрянский В.В. Договор купли-продажи и его отдельные виды. М., 1999, С. 178, Гражданское право. Учебник /Под ред. Гришаева С.П. М., 1998, С. 172 и др..

<sup>19</sup> Տե՛ս, օրինակ, Քվարեկի քաղ. օր.-ի 1435-րդ և 1436-րդ հոդվածները, Канада, Гражданский кодекс Квэбека, Науч. ред.:Козырь О.М., Маковская А.А., М., Статут, 1999, С. 472.

<sup>20</sup> Տե՛ս Денисов С. Договор присоединения //Бизнес-адвокат. 1997, N 5 /էլեկտրոնային աղբյուր/՝ http://www.lawmix.ru/comm/8461

**Анна Манасян**  
аспирантка кафедры общей юриспруденции  
Ереванского университета “Гладзор”

**РЕЗЮМЕ**

***Договор присоединения и принцип свободы договора***

Статья посвящена вопросу договора присоединения, которое мало исследовано в науке гражданского права Армении и впервые представлено в действующем ГК РА. В статье описывается история развития и проблемы применения данного института, а также проанализирована статья 444 ГК РА, выявлены и обоснованы ее недостатки, сделаны соответствующие выводы. На основе проведенного исследования автор предлагает внести изменения законодательного характера и редактировать статью 444 ГК РА.

**Ключевые слова:** принцип свободы договора, ограничение принципа свободы договора, договор присоединения, стандартные условия.

**Anna Manasyan**

Post graduate student of Law department, Yerevan Gladzor University.

**SUMMARY**

***Agreement of the joining and the principle of freedom of the agreement***

The article is devoted to the issue of the joining agreement, which is not much studied in the science of the civil rights of Armenia and first appeared in current CC of RA. In the article we describe the history of the development and the problems of the application of the institute under consideration, as well as the article 444 CC RA is analyzed, its limitations are identified and justified and corresponding conclusions are made. Based on the conducted study it is suggested by the author to make changes of the legislative nature and edit the article 444 CC RA.

**Keywords:** the principle of freedom of contract, the limited principle of freedom of contract, contract of the joining, standart conditions.